Известия АН Армянской ССР, Науки о Земле, 94—97, 1975

НАУЧНАЯ ХРОНИКА

Գ. Բ. ԳԵՐԳՈՐՅԱՆ, Ռ. Հ. ՎԱՆՅԱՆ

# ԼԱՆԴՇԱՖՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՅՈԹԵՐՈՐԴ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*1974 թ. սեպտեմբերի 17-ից մինչև 22-ը Պերմ քաղաքում տեղի ունեցավ թվով յոթերորդ համամիութենական խորհրդակցությունը՝ նվիրված լանդշաֆտների դինամիկայի պրոբլեմներին։ Այն կազմակերպել էր ՍՍՀՄ աշխարհագրական ընկերությունը Պերմի համալսարանի աշխարհագրական ֆակուլտետի և աշխարհագրական ընկերության Պերմի բաժանմունքի ակտիվ մասնակցությամբ։*

*Խորհրդակցության քննարկման էր ներկայացված չորս խոշոր պրոբլեմներ, որոնց և նվիրվեցին առանձին սիմպոզիումներ։ Դրանք էին.*

*1 Լանդշաֆտների դինամիկայի տեսական պրոբլեմները,*

*2 Լանդշաֆտների դինամիկայի ուսումնասիրման մեթոդները,*

*3 Լանդշաֆտների դինամիկան և մարդկային գործունեությունը,*

*4 ՍՍՀՄ լանդշաֆտների դինամիկան և նրա պատմությունը։*

*Խորհրդակցության առաջին օրը կայացավ պլենար նիստ, որին մասնակցեցին բոլոր սիմպոզիումների մասնակիցները՝ թվով 300 մարդ։ Պլենար նիստում լսվեցին Միության նշանավոր լանդշաֆտագետների առավել տեսական հետաքրքրություն ներկայացնող զեկուցումները, որոնցում փաստորեն ամփոփվեցին ՍՍՀՄ-ում լանդշաֆտագիտության զարգացման հիմնական ուղիներն ու արդյունքները և նշվեցին հետագա աննելիքներն ու հեռանկարները։*

*Այդ զեկուցումներից արժե հիշատակել Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ն. Ա. Սոլնցևի «Լանդշաֆտների դինամիկայի հիմնական պրոբլեմները», ՍՍՀՄ ԳԱ Աշխարհագրության ինստիտուտի աշխատակից, պրոֆեսոր Վ. Ս. Պրեոբրաժենսկու «Լանդշաֆտների դինամիկայի հիմնական հասկացությունների քննադատական ընդհանրություն», Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Ա. Գ. Իսաչենկոյի «Ժամանակակից լանդշաֆտագիտության դինամիկական ասպեկտները», Լվովի համալսարանի պրոֆեսոր Կ. Ի. Գերենչուկի «Լանդշաֆտների դինամիկան և նրա ուսումնասիրման պրոբլեմները, կապված բնության պահպանության հետ» և ուրիշ այլ (թվով մոտ 10) զեկուցումներ։*

*Առաջին՝ լանդշաֆտների դինամիկայի տեսական պրոբլեմներին նվիրված սիմպոզիումի առավել հետաքրքիր զեկուցումներից կարելի է նշել ակադեմիկոս Վ. Բ. Սոչավայի և իր աշխատակիցներ Ա. Ա. Կրաուկլիսի ու Վ. Ս. Միխնևի համատեղ զեկուցումը «Լանդշաֆտի դինամիկան և պատկերացում էպիֆցիալի մասին» թեմայով։ Այս աշխատանքում օգտագործված էր ԳԱ Սիբիրի բաժանմունքի աշխարհագրության ինստիտուտի երեք տարասեռ ֆիզիկա-աշխարհագրական մշտական դիտակայանների արդյունքները, որոնք հնարավորություն էին ընձեռնել վեր հանել փոքր բնատարածքային միավորների սեզոնային և տարեկան դինամիկան՝ քանակական ցուցանիշներով։*

*Տեսական մեծ հետաքրքրություն ներկայացրեց նաև Կ. Ի. Գերենչուկի և*

Ա. Գ. Թուչիևի զեկուցումը, նվիրված բնատարածքային համալիրների ստրուկտուրաների դինամիկ վիճակների վերլուծմանը։ Համանման հարցերի շուրջը զեկուցումով հանդես եկավ նաև Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ն. Ա. Գվոզդեցկին («Ֆունկցիոնալ անբողջական համակարգերը և լանդշաֆտների դինամիկան»)։ Երկրորդ սիմպոզիումում մեծ հետաքրքրություն առաջացրեց Թբիլիսիի համալսարանի երիտասարդ լանդշաֆտագետ Ն. Ի. Բերուչաշվիլու զեկուցումը «Երկրաֆիզիկական մոտեցում լանդշաֆտների դինամիկայի ուսումնասիրման ժամանակ» թեմայով։ Այդ զեկուցումը կազմված էր Թբիլիսիի համալսարանի ֆիզիկա-աշխարհագրական մշտակայանում կատարված լանդշաֆտների ֆիզիկայի վերաբերյալ տեսական ուսումնասիրությունների հիման վրա։ Հեղինակը ստացել էր չափազանց հետաքրքիր քանակական տվյալներ լեռնային լանդշաֆտների ջրաջերմային հաշվեկշռի տարեկան և սեզոնային փոփոխությունների վերաբերյալ։

Տարբերական լանդշաֆտային միավորներից (ֆացիաներից) ստացած քանակական ցուցանիշների մաթեմատիկա-վիճակագրական վերահաշվարկումները հնարավորություն էին տվել Ն. Ի. Բերուչաշվիլուն վեր հանելու լեռնային որոշակի լանդշաֆտի սահմաններում նյութերի և էներգիայի շրջանառության մեխանիզմը, պարամետրերը և ընթացքը։

Լանդշաֆտագիտության մի այլ ուղղության՝ լանդշաֆտների դինամիկայի երկրաքիմիական ասպեկտներին էր նվիրված Սիբիրի աշխարհագրության ինստիտուտի աշխարհագետներ Վ. Ա. Մնիտկոյի, Ա. Գ. Սապանովի և ուրիշների զեկուցումը՝ «Երկրաքիմիան, մետաբոլիզմը և երկրային համակարգերի դինամիկան» թեմայով։ Նշյալ զեկուցումը ևս ամփոփում էր մշտակայաններում կատարված բազմամյա դիտարկումների արդյունքները։ Վ. Ա. Մնիտկոն հանդես եկավ մի հաղորդմամբ ևս՝ «Երկրային համակարգերի բնական ռեժիմի ժամանակա-տարածքային մոդելները», որը առաջացրեց մասնակիցների մեջ մեծ հետաքրքրություն։ Լենինգրադի լանդշաֆտագետ Ն. Ն. Շեֆֆերը իր նմանօրինակ զեկուցման մեջ հիմնականում անդրադարձավ լանդշաֆտների տարածքային դինամիկայի մոդելավորմանը, իսկ Է. Վ. Ֆրիշը՝ դինամիկայի ուսումնասիրման ժամանակ ինտեգրալ ֆենոլոգիական մեթոդի օգտագործման հնարավորություններին։ Երկրորդ սիմպոզիումում աշխույժ քննարկման առարկա հանդիսացան Մոսկվայի համալսարանի լանդշաֆտագետներ Յու. Ն. Յեսելշուկի «Լանդշաֆտների դարավոր փոփոխությունների ուսումնասիրման պատմա-աշխարհագրական մեթոդների մասին» և Լ. Ս. Ֆիլիպովիչի «Լանդշաֆտների դինամիկայի ուսումնասիրումը ատրոհանութների և անցյալ քարանկարագրական նյութերի օգնությամբ» զեկուցումները։

Անհամեմատ շատ զեկուցումներ և հաղորդումներ կարդացվեցին երրորդ սիմպոզիումում, որը նվիրված էր անտրոպոգեն գործոնին, որպես լանդշաֆտների դինամիկ հավասարակշռության խախտողի (մոտ քսան զեկուցում և տասը հաղորդում)։ Այս սիմպոզիումում քննարկվող զեկուցումները հետաքրքրություն էին ներկայացնում առավելապես պրակտիկ առումով։ Զեկուցումների մեծ մասը ներկայացրել էին Ուրալի լանդշաֆտագետները։ Նրանք կոնկրետ (ռեգիոնալ) փաստական նյութի հիման վրա ցույց տվեցին լանդշաֆտների դինամիկան, պայմանավորված տարածքի տնտեսական օգտագործմամբ (առաջին հերթին լեռնաարդյունաբերական ճյուղերի կողմից)։ Այստեղ որոշ լանդշաֆտային պայմաններում մարդկային չմտածված միջամտությունը հանգեց-

ել է ոչ միայն բնատարածքային համալիրների դինամիկայի, այլև անվերադարձ ոչնչացման։

Առավել ընդարձակը չորրորդ սիմպոզիումն էր։ Այն բաժանված էր չորս սեկցիաների «ՍՍՀՄ եվրոպական մասի հարթավայրեր», «Արևմտյան, Արևելյան Սիբիր, Հեռավոր Արևելք», «Արիդ տերիտորիաներ» և «Լեռնային մարզեր»։ Բնատարածքային այդ սկզբունքի համաձայն մեր հանրապետությունից ներկայացված զեկուցումներ ընդգրկված էին «Լեռնային մարզեր» սեկցիայում։ Դրանք էին Ա. Բ. Բաղդասարյանի, Գ. Բ. Գրիգորյանի և Ժ. Մ. Կարապետյանի համատեղ «Սևանի ավազանի լանդշաֆտների դինամիկան» և Գ. Բ. Գրիգորյանի «Լեռնային լանդշաֆտների երկրաքիմիական ցուցանիշների սեզոնային դինամիկան և նրանց հանքավայրեր որոնող նշանակությունը» թեմաներով զեկուցումները, որոնք հետաքրքրությամբ ընդունվեցին սեկցիայի մասնակիցների կողմից։

Խորհրդակցության մասնակիցների համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ. Պերմ քաղաքի տարածքում, Պերմից 70 կմ հյուսիս-արևմուտք գտնվող «Ուստ-Կաչկա» առողջարան և Կունգուրյան նշանավոր կարստային քարայրեր ու սառցե լեռներ կոչվող ինքնատիպ լանդշաֆտը (Պերմից 270 կմ հարավ-արևմուտք)։ Կարդացված զեկուցումների մի մասը (առավելապես երրորդ սիմպոզիումի) քննարկվեց հիշյալ էքսկուրսիաների ընթացքում։

Ի՞նչով էր առանձնահատուկ ներկա խորհրդակցությունը։

Մեր կարծիքով առավել աչքի ընկնող կողմը, ի տարբերություն 1963 թվին գումարված 6-րդ խորհրդակցության, դա տեսական հարցերի և, առավելապես, մեթոդական հետազոտությունների ակնառու արագ աճն է, ինչպես նաև լանդշաֆտային տոպոլոգիական ուսումնասիրությունների համար ֆիզիկա-աշխարհագրական ստացիոնարների (մշտակայանների) հիմնադրումն ու արդեն առաջին դիտումների ընդհանրացման փորձերը։

Այս խորհրդակցության երկրորդ կարևոր կողմը դա լանդշաֆտային համալիրները, որպես բաց կիբեռնետիկական համակարգեր դիտարկելն է և նրանց ուսումնասիրման ժամանակ մաթեմատիկական մեթոդների կիրառումը։

Երրորդը, դա բնատարածքային համալիրների ինվարիանտների մոդելավորումն է, նրանց մորֆոլոգիական մասերի (հորինվածքների) դինամիկ հավասարակշռվածությունների ինֆորմացիոն անալիզը։ Եվ, վերջապես, ժամանակակից լանդշաֆտային հետազոտություններում նյութերի բալանսի էներգետիկ հաշվարկից դեպի ինֆորմացիայի անալիզի անցումը, լանդշաֆտները որպես բազմահամակարգեր նրանց ֆունկցիոնալ գործունեության ուսումնասիրումը՝ կիբեռնետիկայի հնարքներով ու հավանականության տեսությամբ։ Խորհրդակցությանը ներկայացված զեկուցումների մեջ առանձնակիորեն անջատվում էին Մոսկվայի և Սիբիրի լանդշաֆտագետների աշխատանքները։ Նրանք աչքի էին ընկնում տեսական ընդհանրացումներով, խորոլոգիական (նկարագրական) շարադրման փոխարեն փաստերի սինվոլացմամբ, մաթեմատիկական հաշվարկումների լայն կիրառմամբ, մոդելների միջև տրամաբանական ինֆորմացիոն կապերի անալիզով և կողմերով։ Խորհրդակցությունը ընդունեց բանաձև, որտեղ առաջարկվում էր ընդլայնել մշտական աշխարհագրական դիտակայանների ցանցը՝ հատկապես լեռնային երկրների սահմաններում, քանի որ լեռնային լանդշաֆտները առավել դինամիկ ու կինետիկ են և ունեն բարդ

համալիրային կազմ ու հորինվածք։ Այս տեսակետից հեռանկարանային է դառնում մեր կողմից խորհրդակցության ժամանակ առաջարկված բարձր լեռնային ֆիզիկա-աշխարհագրական մշտական դիտակայանի ստեղծումը Սևանի ավազանում։

Ընդունված բանաձևում արծարծվեց նաև այն գաղափարը, որ բնական լանդշաֆտների դինամիկայի հարցերը պարզաբանելիս պետք է օգտագործել զոյություն ունեցող արգելոցների հնարավորությունները (որպես էտալոններ)։

ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

ընդունված է 1.XI.1974.